

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է 75 րոպե

11-12-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. $ՄՐՅԵԼ \rightarrow ՄՐՅՈՒՄ = ՄՐՅՈՒԹՅՈՒՆ$ բառերի շարքը կազմված է որոշակի օրինաչափությամբ: Պատասխանի տարբերակներից ո՞րը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա. խիզախել Բ. գնդակոծել Գ. գուշակել Դ. կաթել Ե. գովաբանել

2. *Ի՞նչ ես տանջում. կամ թո՛ւյլ եղիր, կամ արի՛՛, Կամ հեռացի՛ր, ընդմիջո՛ւ գնա՛ , կամ արի՛ :*
Թե չէ՛՝ այդպես դու նման ես չփլված, բայց ուր որ է գլխիս թափվող....

Պատասխանի տարբերակների բառերից որո՞վ է ավարտվում Պ. Սևակի բանաստեղծության բերված հատվածը:

Ա. ժեռ քարի Բ. անձրևի Գ. կամարի Դ. կարկուտի Ե. կրակի

3. Պատասխանի տարբերակներից որի՞ նախադասությունն է գաղտնագրված նկարելուկով:




Ա. Շան սիրտը մեծ է: Բ. Նշենին սիրուն ծառ է: Գ. Աշխենը սիրուն է:
Դ. Շողքը երկար է: Ե. Աշունը սիրուն է:


4. Եթե *վարսահարդար* բառից հանենք վախը, այնուհետև ծամը, ո՞ր բառի ընկերոջը կստանանք:

Ա. օրինավոր Բ. մեծամիտ Գ. սիրելի Դ. նեղսիրտ Ե. չքնաղ

5. Պատասխանի տարբերակներում նշված կանանցից չորսը նույն ընտանիքից են: Ո՞վ է հյուրը:

Ա. Օովինար Բ. Անահիտ Գ. Խանդութ Դ. Արամաղան Ե. Գոհար

6. Պատասխանի տարբերակներից ո՞ր բառը պետք է գրել  -ի փոխարեն, որ *մածուկը* դառնա *կարագ*:

մածուն - մայուն - կայուն - կայան -  - կարագ

Ա. կապան Բ. կատար Գ. կամար Դ. կապար Ե. կարան

7. *Բազմած լուսնի նուրբ շողերին,*

Հովի թևին թռչելով՝

Փերիները սարի գլխին

Հավաքվեցին գիշերով:

Պատասխանի տարբերակներում բերված բառերից ո՞րն իր ընկերը չունի բերված քառատողում:

Ա. սուրալ Բ. նատել Գ. ճաճանչ Դ. խոնվել Ե. ստորոտ

8. *Կետադրել, կետորսանավ, կետագիծ, դիտակետ, բազմակետ, կետագարդ* բառաշարքում բոլորին նման մի անձանոթ է սողոսկել: Ո՞րն է այդ անձանոթը:

Ա. կետորսանավ Բ. կետագարդ Գ. դիտակետ
Դ. բազմակետ Ե. կետագիծ

9. Պատասխանի տարբերակների բառերից որի՞ օտարերկրացի ընկերն է թաքնվել *«Ամռանը սարերում կազմակերպել ենք տոնահանդես»* նախադասության մեջ:






Ա. տոնացույց Բ. սակավապետ Գ. գորագունդ
Դ. կողմնացույց Ե. աճպարար

10. *Հրավեր, հրացան, հրաման, հրապույր, հրապարակ* բառերը, բացի մեկից, պարզ են: Ո՞րը պարզ չէ:

Ա. հրավեր Բ. հրացան Գ. հրաման Դ. հրապույր Ե. հրապարակ

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Պատասխանի տարբերակներում մեղվիկի փոխարեն մեկական տառ տեղադրելուց հետո կստանաս բառեր: Ստացված բառերից որո՞ւմ միաժամանակ չեն գտնի մազ և հավանգ, ծառ և կենդանի, ջրային փոխադրամիջոց և առարկայի ստորին կողմ, հանգույց և մարմնի արտահայտիչ շարժում:

Ա. ՍՈՍ()ՆԶ Բ. ԿԱ()ԱԲ Գ. ՎԱԲ()ԱՆԴ
Դ. ԼԱՍ()ԱԿ Ե. ԶԳԱ()Ի

12. Պատասխանի տարբերակներում տրված կենդանիների ո՞ր եռյակը պետք է տեղադրել *Ջուր տեսնի կղառնա, տեսնի կղառնա* առածում՝ այն ամբողջացնելու համար:

Ա. էշ, գոմեշ, իշայծյամ Բ. ձուկ, կատու, մուկ
Գ. շնաձուկ, կատվաձուկ, օձաձուկ Դ. կով, առյուծ, եղնիկ
Ե. ջրարջ, կատվառյուծ, արջամուկ

13. Պատասխանի տարբերակներից որի՞ նախադասությունն է գաղտնագրված նկարելուկով:

8698 61 401 61 8698 761 401 761



Ա. Փողը կա՝ նա կա, փողը չկա՝ նա չկա:

Բ. Ազատ եմ արդեն, ինչ ուզեմ, ես կանեմ:

Գ. Հացը կա՝ նա կուտի, չկա՝ չի ուտի:

Դ. Փողը որ կա, դեռ չի նշանակում, թե ամեն ինչ կա:

Ե. Փողը փող, բայց մարդը պիտի մարդ մնա:

14. *Թութակ, ընձուղտ, էշ, գեբը, եղնիկ, դիևոզավր, գայլ, բադ,*  կենդանիները ջուր խմելու համար որոշակի կարգով հերթի էին կանգնել լճակի մոտ: Ո՞ր կենդանին պետք է լինի  -ի փոխարեն, որ հերթի կարգը չխախտվի:

Ա. խոզ Բ. ձի Գ. հովազ Դ. առյուծ Ե. գոմեշ

15. Պատասխանի տարբերակների նախադասություններից ո՞րն է գաղտնագրված նկարելուկով:



Ա. Նուռը ճաքեց: Բ. Նոնենին աճեց: Գ. Առուն բարակեց:

Դ. Առնակը վազեց: Ե. Առան ու թռան:

16. Պատասխանի ո՞ր տարբերակում են իրար համապատասխանում հայկական առածների սկիզբն ու ավարտը:

- ա. աղոթքն իր տեղը 1. անտերին՝ գելը
բ. գունեն էնտեղ փչիլը 2. որտեղ լսող կա
գ. հացը տաշտիցը վերցրու 3. փախլավան ուրիշը կերավ
դ. տերովին տերն է տարել 4. թուրն իր տեղը
ե. այլուր մենք մաղեցինք 5. ընկերը գյուղից

Ա. ա-5, բ-2, գ-4, դ-3, ե-1 Բ. ա-3, բ-5, գ-4, դ-1, ե-2 Գ. ա-2, բ-3, գ-1, դ-5, ե-4
Դ. ա-4, բ-5, գ-1, դ-3, ե-2 Ե. ա-4, բ-2, գ-5, դ-1, ե-3

17. Ուսուցչուհին գրատախտակին գրել էր *ըմբռջխնել, դատարան, ճաշակել, ռանվիրա, կթղա, կարապետ, պախուրց, առյան, սկանակ, երասան, ամիճ* բառերը: Գիտունիկը գույզ-գույզ խմբավորեց բառերը: Ո՞ր բառը չգտավ իր գույզին:

Ա. դատարան Բ. ամիճ Գ. կթղա Դ. երասան Ե. կարապետ

18. Մեղվիկի փոխարեն ո՞ր բառը տեղադրենք, որ Հակոբ Պարոնյանի ասույթն իմաստը չկորցնի: *Գիտուն ըլլալուն ամենեն պարկեշտ և ուղիղ ճամփան յուր ճանչնալն է:*

Ա. իմաստությունը Բ. խելքը Գ. սոցիտությունը
Դ. բարեկամներուն Ե. ուսուցիչներուն

19. Պատասխանի տարբերակներում բերված բառազույգերից չորսի բառերն ընկերներ են՝ բացի մի գույզից: Ո՞ր բառազույգն է դա:

Ա. պարկեշտ-առաքինի Բ. ճապաղ-սեղմ Գ. անպաճույճ-հասարակ
Դ. պտղավեո-արգասաբեր Ե. սրդողել-գայրանալ

20. *Բարդ* բառի ո՞ր նշանակությունը չկա հետևյալ տողերում.

- Մոսլ կախվել էին ամպերը բարդ,
Գյուղի տների առաջ հատնել են ահա քանի՜ քանի՜ բարդ,
Անցնում էր փողոցով ծերունի մի բարդ,
Հին երգերն էր երգում՝ տխուր ու բարդ:*

Ա. խարույկ Բ. դեզ Գ. կուտակ Դ. երգիչ Ե. խրթին

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Ո՞ր առածի երկրորդ մասն է գաղտնագրված.

գիմյունխեհինհու վեկայրեղա կենդանուինի:

Ա. Հազար խոսքին մեկ խոսք, Բ. Ուղտը մոտիկ է արածում,
Գ. Ձիու առջևից անցիր, Դ. Փորձված աղվեսը երկու
Ե. Հագին շապիկ չունի,

22. Պատասխանի տարբերակների նախադասություններից որի՞ մեջ է որոշակի օրինակափոխությամբ թաքնվել *«Ես ամաչում եմ»* խոստովանությունն ամբողջությամբ:

- Ա. Թե նստես կառք, իմ բարի աչքերը դու չմոռանաս. սերը կմնա:
Բ. Մենք այդպես էլ չկարողացանք ճշմարտությունն ասել հավաքվածներին. չէինք հավատում արդարությանը:
Գ. Եթե հեռանաս, մենք, այնուամենայնիվ, իրարից չենք բաժանվի. Ժամանակը կրկին կմիացնի:
Դ. Թե վարանում ես մի բան ասել, շտապ հեռացի՛ր, մի՛ մնա:
Ե. Մեզ սիրողները համբերատար, խելացի, հետաքրքրասեր մարդիկ են. նրանք նորարարներ են:

23. *Անկարգել, ուղարգել, անարգել, համակարգել, թափարգել, շանթարգել* բառերը, բացի մեկից, իրենց համարում են նույն ընտանիքից: Պատասխանի տարբերակներից որո՞ւմ է օտարը:


Ա. շանթարգել, անկարգել Բ. ուղարգել, անկարգել Գ. համակարգել, թափարգել
Դ. թափարգել, շանթարգել Ե. անարգել, ուղարգել

24. Պատասխանի տարբերակների նախադասություններից ո՞րն է գաղտնագրված նկարելուկով:

ՅՁՃՓՇ ՃՄՄՏ

Ա. Ափսե՛ն տվեք: Բ. Մեղոն թո՛սով: Գ. Մարդը գնաց:
Դ. Սարդը թո՛սով: Ե. Գարին կերան:

25. Արտակն աղյուսակի վերևի տողում գրեց *կատարել* բառը և ամեն քայլում հանելով մեկ տառ, մնացած տառերով կազմեց նոր բառ ու լրացրեց հաջորդ տողը (տե՛ս նկարը): Նման եղանակով հինգ քայլ հետո Արտակը ստացավ *ար* բառը: Պատասխանի տարբերակներում բերված տառերի ո՞ր հերթականությամբ է Արտակը *կատարել* բառից ստացել *ար*ը:



Ա. կ, լ, տ, ե, ա Բ. տ, ա, կ, ե, լ Գ. կ, լ, ա, տ, ե
Դ. լ, ե, կ, ա, տ Ե. ա, լ, կ, ե, տ

26. Ամենաշատը քանի՞ տարբեր պարզ բառեր «կքամես» *ակնապարար* բառից՝ առանց տառերի հերթականությունը խախտելու:

Ա. 6 Բ. 7 Գ. 8 Դ. 9 Ե. 10

27. Ընկերս պատմեց մի ընտանիքի առաջնեկի մասին, որը սիրում է հայտնվել տարբեր տեղերում: Պատասխանի տարբերակների նախադասություններից չորսը դիպուկ բնութագրում են այդ հանրահայտ առաջնեկին: Ո՞ր նախադասությունն է սխալ բնութագրում նրան:

- Ա. Հաղթողների մեջ երկրորդն է:
Բ. Բնական է համարում, որ *Երևանում չորրորդ* տեղն է զբաղեցնում:
Գ. Հեռուստացույցին նայելիս *միշտ կենտրոնում* է:
Դ. Հայաստանում միայն *երեք* վայրերում նրան կտեսնես:
Ե. *Արցախում ոչ մի անգամ* չի եղել:

28. *Երկնագույն վառելիք* (1), *տվեցյան լուսատու* (1), *թռչունների արքա* (2), *անսպասի նավ* (1), *սև ոսկի* (1): Շրջասույթների արտահայտած իմաստներից յուրաքանչյուրի մեկական տառից կազմվում է բառ, որը

Ա. հյուսնի գործիք է: Բ. տարվա եղանակ է: Գ. գիշատիչ կենդանի է:
Դ. մարմնի մաս է: Ե. շաբաթվա օր է:

29. Պատասխանի տարբերակների ո՞ր եռյակի թվերի «պոչերն» են իրենց կողքին գրված բառերի «ձեռքին»:

- 1 - կուզիկ 100 - ուրբաթ 15 - գնացք 19 - ընկեր
7 - որթել 20 – անսալ 1000 - արծաթ 0 - թուպե
11 - եկվոր 30 - ունելի

Ա. 11, 19, 1 Բ. 30, 15, 1000 Գ. 15, 20, 19 Դ. 7, 11, 20 Ե. 0, 30, 1

30. Պատասխանի տարբերակներում բերված բառերից յուրաքանչյուրը, բացի մեկից, «իրար անցավ» և «ներկայացավ նոր տեսքով»: Ո՞րը չկերպարանափոխվեց:

Ա. քարայր Բ. կարպետ Գ. ասունք Դ. երկանք Ե. ջրամուկ